

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

17.05.2004թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Ա. Մաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ա. Ավագյան (*Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ*), Ն. Բաղդասարյան (*Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ*),

Օրակարգի նախագծում` վեց հարց.

1. «Գյուղատնտեսության ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը» հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Ավագյան/

2. Գույք հանձնելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության հաշմանդամության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2004թ. ապրիլի 19-23-ը Շվեդիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ն. Բաղդասարյան, Ա. Կարապետյան, Լ. Հարությունյան/

5.2 Հաշվետվություն 2004թ. ապրիլի 19-23-ը Մոսկվայի մարզի Խիմկի քաղաքում (Միջազգային համագործակցության կենտրոն «Օլիմպիյեց») կայացած ԱՊՀ երկրներում 2004թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների ցանկի քննարկման և համաձայնեցման նպատակով սեմինար-խորհրդակցության մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/

6. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Գյուղատնտեսության ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը» հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Ավագյան/

Նշվեց, որ հետազոտությունն իրականացվում է «Վիճակագրություն 6» պայմանագրի ներքո «Գյուղատնտեսության վիճակագրություն» նախագծի շրջանակում: Հետազոտության նպատակն է առկա վիճակագրական տվյալների արդիականացումը, ամբողջականացումը և գյուղատնտեսության վերաբերյալ հավաքագրվող վիճակագրական ցուցանիշների ընդլայնումը բուսաբուծության և անասնապահության բնագավառներում: Հետազոտությունը նախատեսվում է իրականացնել 670 գյուղական համայնքներում, հարցազրուցավարների միջոցով, հարցման եղանակով:

Որոշեցին՝

Հաստատել «Գյուղատնտեսության ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը»:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Գույք հանձնելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝ 2001 թվականի Հայաստանի Հանրապետության Ազգային մարդահամարի շրջանակում Համաշխարհային բանկի միջոցների հաշվին ձեռքբերված 21498422 (քսանմեկ միլիոն չորս հարյուր իննսուկուսեց հազար չորս հարյուր քսաներկու) դրամի չափով հիմնական միջոցները, փոքրաթեք, արագամաշ առարկաները «Հայաստանի Հանրապետության 2001 թվականին անցկացված մարդահամարի նյութերի մշակում, ամփոփում և հրապարակում» ծրագրից (01.07.05) հանձնել «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրին (01.07.01):

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշեցին՝ Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին

/Արձանագրային/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության հաշմանդամության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշեցին՝ Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության հաշմանդամության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

/Արձանագրային/

/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2004թ. ապրիլի 19-23-ը Շվեդիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ն. Բաղդասարյան, Ա. Կարապետյան, Լ. Հարությունյան/

5.2 Հաշվետվություն 2004թ. ապրիլի 19-23-ը Մոսկվայի մարզի Խիմկի քաղաքում (Միջազգային համագործակցության կենտրոն «Օլիմպիեց») կայացած ԱՊՀ երկրներում 2004թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար սպառողական սպրանք-ծառայություն ներկայացուցիչների ցանկի քննարկման և համաձայնեցման նպատակով սեմինար-խորհրդակցության մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/

Որոշեցին՝

Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/Արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան